

Այսպէս ըստով կը մտահմայ Աստուածունքին իմ վաճառմով :

ՈՐՈՐԹԱԿԱՆՆԵՐԸ . ԱՆԻԹԵՆՆԵՐ ԵՎ ԵՐԵՎԱՆԻՆԵՐԸ :

Ներքո կը զարմէ բարեցող Պապրատի Վահանքին որ լուսնիմ մը կ'արծարէ :

ՈՐՈՐԹԱԿԱՆՆԵՐԸ (մտտեկայով Ներքոնի աւելի ահաւոր կերպով) . ԱՆԻԹԵՆՆԵՐ :

Ներքո սանկի ուժով կը զարմէ վաճառմին :

ՈՐՈՐԹԱԿԱՆՆԵՐԸ . (գրեթէ անոր գլխուն) . ԱՆԻԹԵՆՆԵՐ ԵՎ ԵՐԵՎԱՆԻՆԵՐԸ :

Ներքո կը փորձէ երբորդ անգամ մըն ալ զարմել վաճառմին, ըսցաւ կ'ըլնայ զետին մուս. դած, մինչդեռ բոլոր տեսարանը կը մթնմայ և կը պայթի որոտումն ճայթիմը :

ՎԵՐԱ ՈՂԵՐԿՈՒՄԻՆԱՅ :

ԹՐԿՄ. Հ. Ա. ՂԱՅԻԿԵԱՆ



ՀԱՅ-ԲՈՇԱՆԵՐ

ԵՒ

ՆՐԱՆՑ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԸ



ՀԱՅ-ԲՈՇԱՆԵՐԻ մասին խօսել ցանկա-
ցողը, անշուշտ պարտաւարած է յիշատա-
կել ամենից առաջ, աշխարհիս ամէն կողմ
ցրած ընդհանուր գնչունքին, որոնց զա-
նազան երկրներում, կոչում են գանազան
անուններով : Երբոպայում նրանց անանում
են յանձնադիր, ցիբան, յիպոն, թիւրքիայում՝
չինգեկէ, Պարսկաստանում՝ կարայի և հայե-
րի մէջ՝ բուշա կամ մաղազարձ : Չը նայելով
պղպիտի տարբեր անունների, այլ և մի-
մանցից բաւական տարբերող տարազի,
բարբի և կրօնի, բոլոր այդ գնչունքեր, ի
թիւս որոց նաեւ Հայ-բոշանքը, պատկա-
նում են մի ընդհանուր ցեղի : Տարբերու-
թիւնը յառաջացել է միջավայրի ազդեցու-
թիւններին և, իրենց գնչունքի, յօգուտ
իրենց գոյութեան, ամէն տեղի պայմանների
հետ պիտութեամբ Հայտաւելու հանդամանքից :
Գնչուն ընդունում է այն ժողովրդի կրօնը,
տարազը և բարբերի մեծ մասը, որի մէջ

նա յաճողում է շահել և ապրիլ : Չը նայե-
լով յարմարելու այլքան ճկունութեան,
գնչուն ամէն տեղ պահպանել է իր ցեղա-
կան ինքնուրոյն շատ յատկութիւններ — Թա-
փառակամութեան ոգին, մարդաբանական
տիպարը, արհեստները և եթէ իր բուն լե-
զուի քերականութիւնը կորցրել է, յաճողել
է պահել շատ բառերի արմատներ և իր
ցեղակցի հետ խօսում է իր բուն — ազգային
լեզուով : Այդպէս են Երբոպայի, Ռուսիոյ,
Թիւրքիոյ գնչունքը, այդպէս են նաեւ Հայ-
բոշանքը :

Գնչունքին ընդհանրապէս՝ ուսումնասի-
րողներ եղել են շատ : Յայտնի են Բաստայնար,
Պատա, Միկոշիչ, կոպերնիցկի, Ատրիանո
կոլոշչի և այլն : Արիական գնչունքին՝ ա-
մենից առաջ ուսումնասիրեց Պասպասի, որ
իր հետազոտութիւնների արկիւնը պայտրեց
1870 թւին ֆրանսերէն լեզուով (*Etudes sur
les tchinghianés 1870 Constantinople*) : Այդ
հազադիտ գրքում, Պասպասին ամէն
կողմով ուսումնասիրել է թիւրք գնչունքի
և մի քանի երեսներ էլ ունի Հայ-բոշանքի
մասին գրած :

Հայ-բոշանքի մասին առաջին անգամ,
առանձնապէս խօսում է մի վենետիկան —
Հ. Ն. Վ. Սարգսեան (*Տիւրքիակցի ի փոքր
և ի Մեծ Հայք*) շատ համառօտ, անսան-
լով նոցա « խանիճազանճ եզրպատական ազ-
գի », (եր. 81-82) : Հ. Սարգսեանը սակաւ;
գրեթէ 20-30 տող է ներում նոցա, և եթէ
արձանագրել է 40 բառ բոշանքի լեզուից,
այդ բառերն էլ նա անանում է մի հնա-
րած լեզուի բառեր, որոնք սակայն բուն գրչ-
չուական լեզուի և սանտիքտերէնի մօտ բա-
ւեր են :

Իսկ Հայ-բոշանքին, ինչպէս և առ հա-
տարակ բոլոր գնչունքին եզրպատացի համա-
րելու սխալը՝ երկար ժամանակ գործել են
բոլոր գնչուարանները : Գնչունքի մտացած
լինելով իրենց քնիկ հայրենիքը, որ նոցա
թողել էին զարբերից ի վեր, և յիշելով վեր-
ջին բնակավայր — Եզրպատը, իրենց իրենց
Եզրպատացիներ են անանել : Հունգարիայում
մինչև այժմ իսկ նոցա կոչում են *Furciaci*
ուլաքե (Փարաւանի ժողովուրդ) : Սիւպյն



ՀԱՅ-ԲՈՇԱ ՆՈՐԱՀԱՐՍ

Միկոյիշէ և այլ լեզարաններ, Հիմնուելով լեզարանական և մարգարանական հետազօտութիւնների վրայ, գտան որ գնչուները սեմիաներ չեն, այլ արիական մի ստորին ցեղի զաւակ, Հնդկական Սիեզ երկրի շար ազգից ելած:

Գնչուները իրենք — իրենց կոչում են՝ էլբրոպայում՝ բոմ, Պարսկաստանում՝ զամ և հայ-բոշաները՝ յամ անուններով: Իրենք՝ իրենց ծագումը չեն յիշում և զանազան լեզուներով են բացատրում (տես այլ մասին իմ « Հայ-բոշաներ » աշխատասիրութիւնը), բայց այլ ևս կասկածի տեղիք չէ մնում, որ նոցա լեզուն Ստանդիստանի շատ մաս մի լեզու է և արիական ստորին ցեղի արիար (բոշաներ գլխի շափն է՝ կանանց — 80 և տղամարդկանց 77, 40 գանակային շափ. հետևապէս կէս կարճալուի, *sous brachycéphale*): Կանայք աւելի լաւ արիար ունին, առողջ, բաջ, զարդարած կազմութիւն, քան տղամարդիկ. գորս պատճառն այն է: որ, բոս Հին եգիպտոսցոց, անուարով զբաղում են կանայք, թափառում են, խմբերի պաշտպաններն են կա-

նայք և տղամարդիկ կատարեալ կանացի են գարձել նստական, անշարժ և դանդաղ կեանքի շնորհիւ:

Հ. Ն. Սարգսեանից յետոյ, առջին անգամ քիչ աւելի երկար գրող և ինչդին լրջութեամբ վերաբերողը եղաւ պրօֆ. Գեր. Պասկանեան, որ Ալամարեանի թոռն էր և հետեւապէս մօր կողմից՝ բոշա: (Ալամարեանի հայրը բոշա Յովսէփն էր Պարսկաստանից): 1887 թին Պետերբուրգում լրջ տեսաւ ոտներէն մի գիրք, « Յիզաններ » վերնագրով, որի մէջ գիտնականը մի քանի խօսք է ասում կովկասի մէջ զանազ գնչուների, այսինքն բոշաների և կարաչիւների լեզուի մասին: Գրքի բովանդակութիւնը նախ որ հարուստ չէ և երկրորդ՝ որ կազմած է ոչ թէ իրեն — գիտնականի հետազօտութեան արդիւնքով, այլ սորանից — նորանից հաւաքած տեղեկութիւնների հիման վրայ: Փոքրապէր տեսարակ է 140 երես, որից 62 երեսը ճառում է ընդհանրապէս բոլոր գնչուների մասին և, ամփոփումն է եղած աշխատութեանց: 12 երես տեղեկութիւն հայ և պարսիկ գնչուների մասին և ապա մի քանի



ՀԱՅ-ԲՈՇԱ ԿԻՐԸ ԹԱՄԱՌՆԻՈՒ ԺԱՄԱՆԱԿ

Հարիւր ճիշտ ու սխալ բաներ՝ բռշանների և կարաչիւնների լեզուի:

Սակայն, այր. Պատկանների աշխատութիւնը, լինելով առաջին փորձ, շատ մեծ կարեւորութիւն ունի մանաւանդ իր եզրակացութիւնների և լեզւարանական խմատատարութեան շնորհիւ:

Այնուհետեւ, երկար ժամանակ, մինչեւ 1889 թիւ՝ ոչ մի գրուածք Հայ-բռշանների մասին: 1889ին թիֆլիզում լոյս է տեսնում մի վէպիկ «Խաթ-Սարա» Հայ-բռշանների կեանքից: վէպիկը ունի իր մէջ ազգագրական նիւթեր, սակայն շատ քիչ և լծերի: Եւ մինչ վէպի հեղինակը, որ անձամբ ուսումնասիրում էր Հայ-բռշաններին, աշխատում էր աւելի նիւթեր ունենալ, 1892 թւին մի Հայ ուչուցիչ, ուսումնասիրելով Անդրալքեր մի բուռ Հայ-բռշաններին, Մարտի մէջ ապում է մի անսխտեմ և շտապով կազմուած ուսումնասիրութիւն՝ Հայ-բռշանների մասին: Պ. Գր. վանցեանի այդ փորձը չունեցաւ ոչ մի գիտական արժէք, որովհետեւ չունէր նախ ազգագրական գիտութեան սխտեմը և ապա՝ կազմուած էր 20-30 տուն Հայ-բռշաններին միայն ուսումնասիրելով:

Այդպէս մինչեւ 1899 թւականը Հայ-



ՀԱՅ-ԲՐՇԱ ԱՇԽԱՏՆԵՐԻՍ

բռշանների մասին չէր լոյս տեսել ոչ մի ամփոփ - գիտական ուսումնասիրութիւն: Այդ թւական եւ լոյս բնծայեցի իմ 10 տարուայ մանրամասն ուսումնասիրութեան արդիւնքը - գիտական սխտեմով կազմած և 1890ին ներկայացրի Մոսկվայի կայսերական ազգագրական ընկերութեան, ուր, աշխատութիւնը պատկուցեալ և յայտարարեցաւ որպէս կատարեալ:

Իմ այդ աշխատութիւնը կրում է «Հայ-բռշաներ» վերնագիրը և մանրամասնօրէն ճառում է բռշանների ծագման, մարգարեանական տիպարի, բնակարանի, կենցաղի և զբաղման, լեզուի, սովորութիւնների, բանաւար գրականութեան, իրաւարանական սովորութիւնների մասին, ունի 400 բաներից բաղկացած բռշանների լեզուի բառարան և նոյն լեզուից ոտանաւորներ ու նմուշներ:

Բազմալեզու այն ընթերցողները, որոնք ափիթ չեն ունեցել կարգալու այդ աշխատութիւնը, կը ցանկային անշուշտ Համառոտակի տեղեկանալ Հայ-բռշանների մասին: կատարելով Բազմալեզու խմատարութեան ինդիքը, կ'աշխատիմ մի քանի խօսքով ամփոփ գաղափար տալ



ՀԱՅ-ԲՐՇԱ ԿԻՆԸ ԻՐ ՏԱՆ ԱՌԱՋ



ՀԱՅ-ԲՈՇԱ ՀԵՍՏՐԱՆՈՒԹԻՒՆ

ղէքսանդրոպօլ, Ախլքալաք (31 տուն) Ախլքիա, Լոտի և այլն, և այլն: Ճիշտ թահաւար ու ննաւ անհասար է, որովհետեւ հայ-բոշաները շատ թափառում են և շարժական են: Ամբողջ ձմեռը նրանք գրազում են մաղ, ընծց, կողով, խոզանակ և այլն շինելով և երբ գարունը բացւում է, բոշա կանայք բեռնաւորած՝ լցում են բաղաքներ և գիւղեր՝ առեւարի թափառելու ժամանակ, ինչպէս բոլոր գնչուները, հայ-բոշաներն էլ սենին նշաններ, որոնք գծում են ծառերի վրայ, յետա-



ՀԱՅ-ԲՈՇԱ ԳԱՆԱՅՔ ԳՅՈՒ ՄԷՋ ՇՈՐ ԵՆ ԼԻԱՆՈՒՄ



ՀԱՅ-ԲՈՇԱՆ ՄԱՂ Ե ԳՈՐԾՈՒՄ

այն ժողովրդի բարբի, կրօնի և շեղի մասին, որոնց անշուշտ ամէն հայ հանդիպած կը լինի մեր երկրի ամէն կողմերում:

Բ.

Հայաստանի գրեթէ ամէն կողմերում կարելի է հանդիպել հայ-բոշաների: Մեծ մասամբ նրանք ապրում են Սեբաստիայի նահանգում, կեղրոն՝ Բոյրաթ աւանը: Կայ Էրզրում, Ակին, Մարզան և Փոքր-Ասիոյ ամէն կողմի կովկասում՝ կարոյ (միջամբողջ գիւղ) Երեւան, Ա-

զայ խորհրդին խմացնելու համար գնալիք ճանապարհի ապահովութիւնը կամ վտանգաւոր լինելը: Նրանց միակ ընտանի անասունը էջն է, որին նոքա սաստիկ սիրում են և երպեր իսկ ունին յորինած նրա վրայ: Բոշաների բնակարանը (ուր նրանք ձմեռն են միայն կենում) մի խղճուկ խրճիթ է. խրճիթի ամենանշանաւոր մասը՝ օջախն է (Սանթօ), որ բացւած է պատի մէջ և ուր շարաթը մի անգամ, իր յարգանք տան մեռած անդամների, կրակ են վառում:

Բոշայի զգեստը՝ հայ զիւղացու հնացած զգեստն է . բոշան չէ սիրում նոր զգեստ հագնել . նորասպակ հարսը միայն , որ 5 տարի չը պիտի թափառի , նոր է հագնուում : Թիւրքէն զարդ երբէք չեն գործածում : Միակ զարդը արծաթեայ կամ պղնձէ մատանին է :

Բոշան շատակեր է . սիրում է կծու բաներ և համեմեր — պղպեղ , սիտոր : Սիրում է խմել օղի . սաստիկ ծխում է :

Բոշայի արհեստներն են — մաղ , փսխաթ , կողով և խոզանակ գործել . երաժիշաներ են , անասնաբոյժներ և երբեմն լաւ դարբիններ :

Բոշա կինը ոչ միայն գող չէ , այլ և վերին աստիճանի հաւատարիմ ամուսինն է : Հակառակ ուու և թիւրք գնչուների , հայբոշա կինը շատ մաքուր է և անպարտ բարականի սէր . նա տուրծի ոչոյով գիտէ պաշտպանել իրեն՝ պատւին դիպչել կամեցողների դէմ : Բայց բոշա կինը սիրում է լկաի սրախսուցթիւններ անել և հայհոյել :

Բոշան սւաման սէր չունի . ոչ մի բոշա կարգաւ — գրեկ չը գիտէ , բայց սիրում է լսել կարգալու , եթէ իր սրտին մտտիկ գորուածքներ են :

Հայ-բոշայի լեզուն կորցրել է իր բերականութիւնը , պահել է միայն արմատները . բերականութիւնը (հորովումն , բայերի խոնարհումը) թիւրքահայ բարբառից է տունած : Պարսկերէնի ազդեցութիւն բոշաների լեզուի վրայ ակնորեւ է . բայց և բոշաների լեզուն բնականօրէն գնչուական լեզուի մի բարբառն է , որի կէտը յատուկ է իրենց ցեղի և միւս կէտը նման եւրոպական գնչուների լեզուին : Այդ լեզուն հնդկա-արիական լեզուի ստորին բարբառներից մէկն է : Իբր օրինակ ահա մի քանի բառեր . պա՛նի-լուր . Ալ-մէկ . ա՛կի-աչք . սեթօր-բնկոյզ . աբա-աբիւր . յուն՝ աշատ . գաբ-ատն . մա՛ն-բերան և այլն (տես բառարանը իմ « Հայ-բոշաներ » աշխատութեան մէջ) : Անսովորը այն է այդ լեզուի մէջ , որ բոշաների և կենդանիների համար առանձին բառեր չունին , այլ կազմած բառեր . օրինակ՝ այծ — յունաբ-բաա (փոքրոտանի) ծոլ — որով-պանի և այլն :

Հայ-բոշաների կրօնը լուսաւորչական քրիստոնէութիւնն է , սակայն , թէև երեսուց

յերմեանոյ են , ներքնապէս և զաղտնի՝ ունին հնամեայ , մի այլ կրօնի ծէսեր , որոնք քրիստոնէութեան ոչ մի նշոյլ չեն կրում : Ո՛չ մի սնտախապաշտութիւն , ծէս և այլն չեն բնպունում . կրօնական նախապաշտութեան բոլորովին չունին : Հին , իրենց բուն ազգային ծէսերից մնում է մի զաղտնի տօն , որ կոչւում է կահաւա . Ս . Գէորգի տօնին , Ապրիլ 23ին , երբ թափառելու պիտի ելնեն , ժամադրութիւն անին մի ջրի մօտ , ուր բոլորը հաւաքում են , ամէն տուն մի գառ է մորթում և 3 օր ուտում — խմում են ու պարում : Այսքան միայն յայտնի է մեզ այդ ծէսից : Ամուսնանում են շուտ . 13 տարեկան աղջիկը հարսնացու է և 15 տարեկան աղանձ փեսացու . չհաս տասն բանը չունին և յաջողում են խաբել հայ հոգեւոր իշխանութիւնը ու շատ ազգակցական մտտիկ ամուսնութիւններ կոչել : Այլին , ամուսնոյ մահաւանից 7 օր յետոյ ամուսնանում է նորից , սուղ պահել չը կայ : Հարսանեկան հնամեայ ծէսերից մէկն է այն , որ փեսան մտնում է թոնիրի մէջ , հարսը երեք անգամ պտտում է թոնիրի շուրջը և երբ « էլ էլ , կը մտնամ , ընդ կը պահեմ » ասում է , նոր թոնրից ելնում է փեսան : Եկեղեցուց յետոյ ամուսնութիւնը կնքում է տան օջախի առաջ : Թողումը , եթէ քաղաքի մէջ է մեռալը , հայ ծէսով են կատարում , եթէ ճանապարհին է , առանց ո՛ր է ծէսի և աղօթքի , շատ պո՛ղ թաղում են ու անցնում : Մտնուելը նոյն կերպ է . ծնող կինը երեխային խնայք բանում է և ստոր ջրում , ինքն էլ լւացում , մտնուկին մէջքին կապում և ճանապարհը շարունակում :

Պար և երաժշտութիւնը ասիական են և շատ յիշեցնում են մարտիանական պարերն ու երաժշտութիւնը :

Բոշաների վարիչն է ցեղապետը , որին նրանք կոչում են աթոռակալ . կայ նաև կառավարութեանց կողմից նշանակած մէկը , որին կոչում են ուստաբաշի և որին բոշաները ստորիկ տաւում են և չեն հնազանդւում . սաստիկ յարգում են աթոռակալին : Ահա լատի կարճագոտ կերպով մի քանի տեղեկութիւններ հայ բոշաների մասին : Ընդ-

արձակ և մանրամասն տեղեկութիւն ունեւնալ ցանկացողները կարող են գիմել իմ «Հայ-բաշակեր» աշխատութեան:

Այժմ մի նմուշ բոշաների լեզուի:

Այ որով-մանուս մանչալ-լաքող ու տւրալին որով-բարդ:

Կը մանջէին որով-պաճնիւլալին գուգաճը: Մի ծեր-մարդ ձուկ-որոսացող և իր ծեր-կինը:

Ապրում էին մեծ-ջրի եզերքը:

Սոյն պատկերները, որ անձամբ լուսանկարել եմ բոշաների մէջ, ներկայացնում են նոցա գանազան տիպարները, կին, երիտասարդ, աղջիկ, մանուկ և ծերունի, նրանց աթոռակայր, նրանց մազ գործելը և այլն:

Հայ-բոշաները Հետաքրքիր, և ընդունակ ժողովուրդ են. որ ապրելով զարերից ի վեր հայերի մէջ, սկսել են սիրել հողը և զգիլ թափառականութիւնից: Ըստ վերջին ստացած տեղեկութիւններիս, կովկասում արդէն արդիւած է նոցա թափառել. մնում է նոցա հող տալ և հայ ժողովուրդը կ'ունենայ իր մէջ արիական մի թարմ ցեղ: Բռշան ո՛չ մի ազգի և ո՛չ իսկ հայի հետ չէ արել մինչեւ այժմ ինամուլթիւն, բայց հարկաւոր է ի նկատի ունենալ որ բոշա — կինը ներկայացնում է մի բարձր տիպար թէ՛ կազմաձորով, թէ՛ գեղեցկութեամբ և թէ՛ առողջութեամբ ու մտաւորականով:

Հայ-բոշաները հային տւել են յայտնի մարդիկ — Պրոֆ. Բ. Պատկանեան, Ալամզ գարեան վարդապետ, Շիրաւնդատէ և այլն, այնպէս, ինչպէս Էրբուպային տւել են յայտնի երաժիշտներ և հրապարակախօսներ եւս:

Հայ-բոշաների մասին գրականութեան մէջ կան ուրեմն հետեւեալ գրքեր:

A. Paspati — Etudes sur les tchinganés. 1870

Հ. Ն. Վ. Սարգսեան. Տեղապրութիւն ի փոքր և ի մեծ հայս, Վննետիկ.

«Այրաս» Բ. Պատկանեանի.

«Խաթ-Սարա» — լէպ Վ. Փափազեանի. «Սանթօ»))

«Հայ-բոշաների վրաններում» լէպ, նոյն հեղինակի,

Գր. Վանցեանի յօդուածները («Մուրճում»), «Թորոս Աղբար» Հատ. I. Գ. Վ Սրահնսեանի. (3 երես)

«Ազգ. Հանգէս» Ե. Լալայիանի (3-4 երես)

«Հայ-բոշաներ», ազգագրական ուսումնասիրութիւն, Վ. Փափազեանի:

Գ. ՓԱՓԱԶԵԱՆ



Ե Ջ Մ Ի Ա Ծ Ի Ն

ԵՋՄԻԱԾԻԱՅ շէնքերուն առաջինը՝ վանքին մեծ բառանկեան կեդրոնին մէջ է, և մեր տեսածին համեմատ, կը կարծուի թէ բուն Ս. Գրիգոր Լուսաւորիչ կառուցել է զայն: Փրկչին իջած տեղը, և թակով զարկած արձակ գետինը՝ շէնքին գրեթէ մէջտեղն է, ու՛ք Հին աստի կոփածոյ սաւաքար մը՝ դրուած էր, Յ ոտք բառակուտի և Հինդ ոտք հաստութեանը՝: Կ'ըսուի թէ այս քարը դրուել է փոխանակ այն առաջին մարմարեանին զոր նոյն ինքն Ս. Գրիգոր գրեւ էր, և Շահ Ապպաս առեր տարեր է: Որքեւ տասներորդ դարուն առաջին բառորդին մէջ՝ Առտուածատուր կաթողիկոսի ժամանակ, այդ սրբավայրին վրան բնախի խորան մը դրուած էր, որ գեռ եւս կայ գմբէթին տակ, և այդ սեղանին վրայ տարածուած է՝ Գալթէփի մարմարեանէ սփռնուր վրայ հաստատուած ամպհովանի մը. կ'երեւի թէ Եղիազար կաթողիկոսին սպարազայն ծրարով շինածին յաջորդեր է այդ շէնքը:

Ընթերցողս չեմ կրնար հրաւիրել՝ որ այդ կարողիկէին ճարտարապետութեան վրայ զարմանայ, թէպէտեւ ներքին կողմը բաւական գեղեցիկ է իրեն բնագրձակ տարածութեամբը, կեդրոնական գմբէթով և չորս խորաններովը, որոնք ներքին կողմի մէյմէկ կէտը գրաւած են: Ս. Հոփիսիմէի եկեղեցւոյն

1. Հմտ. Chardin (éd. Langlès, Paris, 1841, 8. vol. II. p. 175). - Նւրպէս Tavernier (Գեղ. Ա. Գ. Գ.):